

፲፱፻፲፱ ዓ.ም. ሚያዝያ ፳፯ ቀን

22 301.1.60 1872

የብሔራዊ ህዝብ

5410185

Մեմարիքին կրն պէ կրն թէէսիւ
ծըննաճադ պիր խարապիյէթէ եփշտութ
մար իյէ շու հարը միւթէէսիւ փէսին է



Պիղ Լուս 11. Իյեւ Թճրիկիւն շա
քէլամբ անյէմի, Իտիք, քի Ստանազու ա
հալիսի արթըգ սէրպէտի վէ կէնիշնէ ն
փէս ալմայա պաշլայաճաթ տըր, Կիւնքի
այալ ու էվլատլըրիսի նանընտն ալըրը
ճէպրի վէ պիւս մուհաքէմէ մէնֆիյ
կէնտէրմէք նիզամըլըղը Մահմուտ բա
շանին Սէ տարէթիւտէ վոնգ ու պոնմանե
ճաղընը մէշմուտ իթմիլ Իտիք,
Ծագաթ պիր գալ կիւն կէշտիքտէ
վիւքէլատան Իքի զաթըն մէնֆի օլմալաթ
վէ մուսխիսէրէն գայտը հաեաթ իլէ Ահ
քեամը Սալիյէ ազալարը սուլունան իւշ զա
թըն վուգուի ինֆիսալլէրին կէօրիւտիւք
տէ մէմուլիմիզ զաիլ օլուպ քէնտի քէնտիմ
զի սլտաթմըլ օլտուգ, Ֆագաթ օլ վազըր

Ինճամ՝ մէմախբտէ կիւնտէն կիւն
ԹէզտոնԻւտ պուլմագտա օլան նապէճ
հալլէրին պիր ան ագտէմԻ Թէպիլյէսի ի
էնիւնիւ ուլմագ իշիւն Զաթը Կարդէթ

[illegible]

Խմորի աւանդէն իջիլքիպէր սկսան
տուտ զէ թէչէքքիւրէ թահգիլ օլտու :

Լօնտրա ճիւղաբնոտա 48 եւաշնոտա
 պիր տեղիգանլը Դինիր հաթիլիլ շամուր-
 լարա միւլճմա օլիւլա պիրա հալտէ պոն-
 զոնոսք զապիր թէրաթընտան իւրերինն
 վարըլըր, պալտէհո մէքըլմ ֆէնալըլմ-
 յա պաշլըլըր իւլ պաաթ մօնըս լէֆաթ
 իտէր, սօնրա ֆօլիօ ճէնալըլի վահրէ մէլէ
 կէթիւրիւպ սէպէպի վէֆաթը ալոնըլ-
 վադտա իլէն } ծըաաա պո ըլլանլարտան
 պիրի պըրգաթ իլէ պադըրըլտա պէնիկն
 պիր զթիլն զթիւ օլտադոնսլ իտապի



ሆኑት ሁሉ ለጊዜው ሲሆኑ ለጊዜው ሲሆኑ

25 ՅՈՒԼԻՍ 1872

Ս.ՍԻԹԱՆԼԻ 25 ՅՈՒԼԻՍ

ՇԵՍՏԻՆԻ ԳՐԻՍՏՈՍԻ ՓԼՈՒՅՑ

ԱՆՏՈՆ ԳԵՏՐՈՍ Թ.

ՊԱՏՐԻԱՐԻ ՏԱՆԷ ԿԵԼԻԿԻՐՅ

43.09.1400

ՀԱՅՈՅ ՌԻԴԱՓԱՌԱՅ

ՀԱՍՏԱՏԵԱՒ, Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԿՆ ՀՌՈՎԱԾՑ

Պատուական Եղբարց մերոց ԱՐՏ. ԳԵՐ. Արքեպիսկոպոսոց և Եպիսկոպոսաց և Սիրեցեալ գործակցայ մերոց Յ. Յ. Բա- հանայից և Աստուածաւէր Որդւոց Հաւա- տացելոց Պատրիարքութեանս Կիւրիկիոյ Ողբոյն և Աստուածաւանդ օրհնութիւն :

Քանի մը տարիէ ի վեր Աստուածային տեսչու-
թեան անգնէնին խորհրդով այս փոքրիկ Ուղղափառ
Եկեղեցւոյս վրայ դառնացած արտաքոյ կարգի տառա-
պանաց տնուր տեսարանը, զիւռ ամենուդ առջեւ
է, Պատուական Եղբարք, և Սիրեցեալ Որդիք,
այնպէս որ հարկ չիկայ ամենեւին որ Զեզի անոր
ցաւազին նկարագիրը ընժայեալու համար այս կա-
րեւոր վերջին կէտերուս մէջ աւելորդ ատեն կոր-
սնցնեմ. հարկ չիկայ մանաւանդ զի զուք ամէնք

Տեղի ալ Կաթողիկէայ Եկեղեցւոյս այս սրտաշարժ հանդիսին քիչ շատ անձամբ ալ մասնակից և Կաթօկից եղած էք ։ Այս դառն նեղութեանց մէջ մեր միակ միաթմարութիւնը, և որ աւելին է մեր հաստնտուն վստահութեանը քալարեր՝ Ձեր ամենուրեք անասան և անվիհեր կրօնասիրութիւնը եղած է որով ոչ մարդկային նկատմանց հրապուրանքներէն թեւադրեալ, և ոչ իսկ սպառնալիքներէն սարսեւով Ձեր Սուրբ Հարց հաւատքը պաշտպանելու համար ամենայն նեղութիւն և տառապանք սիրով յանձն տուիք ։ Ոսկեբերաններու և Իգնատիոսներու սքանչելի հանդիսիւր և յիշատակաւ հրաշալի հանդիսացած այս Եկեղեցւոյս ի Հոգւոյն Սրբոյ Դէտ և Հովիւ և Կիւրիէիոյ Աստուածապապի աթոռոյն Ձեր Արհիպատիւ Եղբայրակցացդ ազատ և ինքնացօմար-կանոնական ընտրութեամբք և Սրբոյ պահուն հաստատութեամբը օրինաւոր Կաթողիկոս կարգուելէն ի վեր, Մեր բոլոր ջանքը ու փոյթը այն եղաւ որ Մեր անձնական հանդատութիւնները ու դիւրութիւնները մէկդի թողով ամենին առաջ ուղղափառ հաւատոցը անքծութեան անաշտո նախանձախնդիր, Եկեղեցական Աղատութեան կորովի պաշտպան և կանոնական բարեկարգութեան անխտը պահպան ըլլանք ։ Վստնորոյ հաւատոց ամբողջութեան դէմ որ և է յորձակում անվիհեր դիմադրութեամբ մերժեցինք, Եկեղեցական աղատութեան դէմ եղած սեղանակապատութեանց՝ խնտութեամբ զինեցանք, և կանոնական բարեկարգութեան եղծմանը համար եղած ճգանց՝ ամենայն փութով դիմադիր եղանք, Գարուս եղծ գաղափարաց դէմ բոլոր Կաթողիկէայ Եկեղեցւոյ հետ մատեղ արիաբար և անխտը տքնութեամբ մրցելով, կեղծանուն և կրօնաւէր ազատութեան, ազգայնութեան և անկախութեան դրութիւններն ալ մերժելով, Մեզի յանձնուած Բրիտանոսեան Հատը Եկեղեցւոյ և մարդկային ընկերութեան միտապար այն նորահնար մոլորութեանց հեղեղներէն աղատելու ջանացինք ։ Ձեմբ դանդաղիւր զայն ալ յայտ յանդիման և առաջի Ձեր ամենեցուն ամենայն համարձակութեամբ յիշատակելու որ՝ Մեր Սուրբ Հարց և պանծալի Նախորդաց Հայաստանեկոյ Եկեղեցւոյ Հիմնադիր և պարծանքն եղող Հայրնայնաց յաւիղներուն հետեւելով Կեփայեան Աթոռոյ ունեցած մեր յարումը սերտ, անկեղծ և անասան էր և է շնորհիւն Աստուծոյ և բոլոր մեր Սիրելի Հօտն Նոյն փրկաւէտ զծին վրաց որ

առեր միշտ հաստատուն պահելու հա մար ամենայ
ճիշդ ու ջանքը ի գործ դնելէ երբեք չդանդաղե-
ցանք . այնպէս որ կարող եմք ըսելու Առաքելոյն
հետ թէ « Դ՛ի խորհեցայ ի չպատմելոյ Զեզ զամե-
նայն կամս Աստուծոյ » , այլ և զայս ալ նոյն տ-
առաքելոյն հետ աւելցնելու կը փութամ թէ « Ոչ ի-
ւիք համարիմ զանձն պատուական որպէս զկատու-
րել զընթացս իմ ուրախութեամբ և զպստոնն զոր
ստի ի Տեառնէ Յիսուսէ մկայ լինել Աւետարանի
շնորհացն Աստուծոյ » ։

Այլ Ձեռի ծանօթ է, Պատուական Ներքաբք և Սիրեցեալ Որդիք, Թէ այնուհետեւ ինչչափ Եկեղեցւոյ Թշնամիք կամ անոնցմէ խարուած անձինք զանազան զրպարտութիւններով Մեզ հալածելու ջանացին, Մեր միտքը ու գիտաւորութիւնները թիւրեւով, Մեզմէ հեռու եղած խորհուրդներ Մեզ սեպհականելով, Մեր ամեն գործոց և խօսից թիւր մեկնութիւններ տալով, Մեր բարեկարգական տըրամադութեանց, մեր ազգայէն ձեռնարկութեանց իսկ ծուռ աչօք նայելով. վերջապէս եկեղեցականք ազգայինին, կանոնականը աշխարհականին, Նուիրականը աննուէրին, կրօնականը արտաքնոյն հետ աղաւաղելով, Մեզ մեր Մեծազօր Բազմագութ և Արգարասէր Ինքնակալին և իր Տէրութեան առջեւ ևս կառկածելի հստիւքացնելու ջանացին, Մենք որ երեսնամեայ պաշտամանս մէջ մ. Ս. Հաւատոյ հրահանգացը և Սյրոյն Պօղոսի Առաքելոյն հըրամանացը համեմատ ոչ միայն անձամբ Մեր առ կոյսըն անկեղծ հաստատութեան և հաւատարմութեան պարտքը ձեռի կատարելու փութացինք, այլ և Մեր ինձամոյը հաւատացեալ բոլոր զղերց և ժողովըրդեան նոյնը կատարելու համար անդադար ամենայն ջանք իգործ դրինք ։ Բարձրադէ Աստուած որ վկայ էր Մեր այս անկեղծ մտաց և խորհրդոյ, մեր բարեխառակ Նախորդաց ջանիցը համեմատ Մեր բազմամեայ աշխատութիւն ալ օրհնելով ա՛յնուհետեւ Եկեղեցիինս կը զարգանար, Սուրբ Հաւաքը կը տարածէր, և նոյն իսկ հասարակութիւնը քիչ ժամանակուան մէջ կաթողիկեայ հաւատոց հաստատուն և արդիւնաւոր կրթութեան ներքեւ զօրանալով ամենեցուն առջեւ սքանչելի օրինակ կը հանդիսանայր ։ Բայց ափսոս մախանք չարին կարող եղաւ Աստուծոյ թոյլտուութեամբ զորոմի երկպառակութեան հասարակութեան մէջ ցանել, և սոստիկ փոթորիկ մը յարուցանելով, ամեն բան վեր ի վայր ընել. և մինչև, այն տարի